

վարդապետը, առաքելոյն մարմինը գերեզման դըր-
ուած է» (Enl. հատ. Ա. 187-193):

6. Յովհաննէս-Մարկոսի մօր՝ Մարիամու սակ-
սեղը. — Ս. Թովմայի եկեղեցիէն 180 քայլ դէպի հիւ-
սիս — արևելք կը գտնուի փոքր եկեղեցի մը՝ Յովհան-
նէս — Մարկոսի մօր՝ Մարիամու տան աւանդական
տեղւոյն վրայ: Այս տեղն էր ուր եկաւ Ս. Պետրոս,
հրեշտակին միջոցաւ բանտէն ազատելէ յետոյ, ինչ-
պէս կը պատմէ Ղուկաս (Գործք. ԺԲ. 3-17): Այս ե-
կեղեցին կոչուած է Ս. Աստուածածին և կը վերա-
բերի Ասորոց: Այս աւանդական տեղւոյն վրայ կը յիշ-
ուին հետեւեալ աւանդութիւնները.

ա) Եկեղեցիին մուտքի դրան զիմացը կը նկատ-
ուի Ս. Կոյսի մկրտութեան տեղը, որ այժմու վիճա-
կին նայելով՝ փոքր կարասի մըն է և իր վրայ կը կրէ
ամպհովանի մը և սեղանի մը ձևը ունի:

բ) Այս եկեղեցիին մէջ ցոյց կուտան նաև խիստ
հնագոյն պատկեր մը, որ կը կարծուի թէ Ս. Ղուկաս
Աւետարանէն նկարուած է: Այս պատկերը արծաթ-
եայ շրջանակ մը ունի և ապակիով պահպանուած է
(Ham. էջ 225-226):

գ) Գործք Առաքելոցի յիշած եւ այս եկեղեցիին
մօտիկ երկաթի դրան աւանդութեան մասին Յովհաննէս
եպս. Երուսաղէմացի կը գրէ. «Ի ճանապարհին զը-
տանի կամար մի ի հարաւակոյս իբր զգուռ, եւ էր
սա դուռն երկաթի, որպէս գրեալ է ի գործս Առաքե-
լոցն. յորժամ հրեշտակ Տեառն եհան զսուրբն Պետ-
րոս ի բանտէն ի զիշերոջ, եկին ի դուռն երկաթի որ
հանէր ի քաղաքն, որ ինքնին բացաւ նոցա: Եւ ի նը-
շան հաստատութեան յաջակողմն կառնարին սեսանի սիւն